



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 փետրվարի 2015թ.

N 58-Ս

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 3-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՅԿԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի 2015 թվականի փետրվարի 12-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրություն նշանակելու մասին» ՆՀ-15-Ն հրամանագիրը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը **որոշում է.**

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի 2015 թվականի մայիսի 3-ի հերթական ընտրության նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներին և աշխատակազմին, տարածքային ընտրական հանձնաժողովներին՝ ապահովել ժամանակացույցով նախատեսված միջոցառումների սահմանված ժամկետներում կատարումը և ընտրությունը պատշաճ մակարդակով կազմակերպելու աշխատանքները:

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղար Ռ. Նազարյանին՝ կազմակերպել սույն որոշումը եռօրյա ժամկետում համապատասխան շահագրգիռ գերատեսչություններին և պատասխանատու կատարողներին ուղարկելու աշխատանքները:

3. Սույն որոշման կատարման ընդհանուր վերահսկողությունը վերապահել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Ս. Արզումանյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Ս.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի 2015 թվականի մայիսի 3-ի հերթական ընտրության
նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների

N	Միջոցառման բովանդակությունը	Իրավական հիմքը (Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենգիրք)	Կատարման ժամկետը (ներառյալ)՝ 2015թ.	Կատարող(ներ)ը
1	Դիտորդների հավատարմագրում իրականացվում կամ հավատարմագրված դիտորդների ցանկում փոփոխություններ (լրացումներ) կատարվում է. ընտրությունը նշանակելու օրվանից հետո, բայց քվեարկության օրվանից ոչ ուշ, քան տասն օր առաջ	Հոդված 30, մաս 2	Փետրվարի 13-ից մինչև ապրիլի 23-ը	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
2	Դիտորդներին տրվող վկայականներն այդ կազմակերպություններին հանձնվում են. դիմումն ստանալուց ոչ ուշ, քան յոթ օր հետո	Հոդված 30, մաս 3	Փետրվարի 14-ից մինչև ապրիլի 30-ը	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
3	Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունն ստեղծվում է. ընտրությունը նշանակվելու օրվան հաջորդող օրվանից	Հոդված 28, մաս 1	Փետրվարի 13-ից	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
4	Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների, վստահված անձանց և դիտորդների համար ուսումնական ձեռնարկներ հրապարակվում են. ընտրությունների անցկացման ժամանակահատվածում	Հոդված 48, մաս 1, կետ 15	Փետրվար-մայիս	Կենտրոնական ընտրական հանձնաժողով

5	<p>Կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների՝ վերջին հինգ տարում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու և վերջին հինգ տարում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում մշտապես բնակվելու մասին տեղեկանքը տրամադրվում է դիմելուց հետո.</p> <p>եռօրյա ժամկետում, բայց ոչ շուտ, քան մինչև ընտրությունների նշանակումը</p>	Հոդված 106, մաս 4	Փետրվարի 12-ից սկսած	Ոստիկանություն
6	<p>Ընտրական շտաբները կարող են կազմավորվել.</p> <p>ընտրություն նշանակվելուց հետո</p>	Հոդված 18, մաս 5	Փետրվարի 13-ից	Թեկնածուներ, կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ
7	<p>Ընտրատարածքի՝ մեկից ավելի շրջանների համայնքներ ընդգրկվելու դեպքում, որոշվում է այն տարածքային ընտրական հանձնաժողովը, որին լիազորություն է վերապահվում տվյալ համայնքում ընտրությունների կազմակերպումը և անցկացումը.</p> <p>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 65 օր առաջ</p>	Հոդված 34, մաս 3	Մինչև փետրվարի 27-ը	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
8	<p>Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում թեկնածուներին, կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին տրամադրվող վճարովի էթերաժամի մեկ ընթացքի գինը հրապարակվում է.</p> <p>ընտրությունը նշանակելու օրվանից ոչ ուշ, քան տասն օր հետո</p>	Հոդված 19, մաս 4,5	Մինչև փետրվարի 22-ը	Հեռուստաընկերություններ և ռադիոընկերություններ (անկախ սեփականության ձևից)
9	<p>Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուների գրանցման փաստաթղթերը կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են.</p> <p>քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 55 և ոչ ուշ, քան 45 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն</p>	Հոդված 125, մաս 3	Մարտի 9-ից մինչև մարտի 19-ի ժամը 18.00-ն	Կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ
10	<p>Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուների գրանցման փաստաթղթերը համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում են.</p> <p>քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 55 և ոչ ուշ, քան 45 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն</p>	Հոդված 125, մաս 5	Մարտի 9-ից մինչև մարտի 19-ի ժամը 18.00-ն	Թեկնածու կամ թեկնածուի լիազոր ներկայացուցիչ

11	Թեկնածուներին ու համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անվճար հիմունքներով տրամադրվող դահլիճների և այլ շինությունների ցանկը կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է. ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան քսան օր հետո	Հոդված 18, մաս 3	Մինչև մարտի 4-ը	Շրջվարչակազմերի ղեկավարներ, Ստեփանակերտի քաղաքապետ
12	Անվճար հիմունքներով տրամադրվելիք դահլիճների և այլ շինությունների ցանկը (շրջվարչակազմերից և Ստեփանակերտի քաղաքապետարանից ստացված) կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում է . ցանկը ստանալու օրը	Հոդված 18, մաս 3	Մինչև մարտի 4-ը	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
13	Համայնքի տարածքում քարոզչական պաստառներ փակցնելու համար անվճար տեղեր առանձնացնելու մասին որոշում ընդունվում է. ընտրությունները նշանակվելուց հետո՝ 21-օրյա ժամկետում	Հոդված 20, մաս 3	Մինչև մարտի 5-ը	Համայնքի ղեկավար
14	Զինվորական մասերում (Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային անվտանգության և ոստիկանության գործերում) հաշվառված ընտրողների թիվը համապատասխան համայնքի ղեկավարին, ոստիկանություն և կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է. քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 50 օր առաջ	Հոդված 8, մաս 10	Մինչև մարտի 14-ը	Պաշտպանության նախարարություն, Ազգային անվտանգության ծառայություն, Ոստիկանություն
15	Ընտրական տեղամասերը կազմավորվում են. քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 45 օր առաջ	Հոդված 14, մաս 1	Մինչև մարտի 19-ը	Ոստիկանություն՝ համայնքի ղեկավարի, տարածքային ընտրական հանձնաժողովի անդամի մասնակցությամբ
16	Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների գրանցումը կատարվում է. քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 45 և ոչ ուշ, քան 35 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն	Հոդված 125, մաս 4	Մարտի 19-ից մինչև մարտի 29-ի ժամը 18.00-ն	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
17	Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուների գրանցումը կատարվում է. քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 45 և ոչ ուշ, քան 35 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն	Հոդված 125, մաս 6	Մարտի 19-ից մինչև մարտի 29-ի ժամը 18.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողով

18	Նախընտրական քարոզչությունը ֆինանսավորելու նպատակով նախընտրական հիմնադրամներ բացվում են. գրանցվելուց հետո	Հոդված 25, մաս 1, Հոդված 120, մաս 1	Մարտի 20-ից	Թեկնածուներ, կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ
19	Թեկնածուի, կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցչին կազմավորված ընտրական տեղամասերի թվի եռապատիկից ոչ ավելի թվով վստահված անձանց վկայականներ տրվում է. թեկնածուներին, կուսակցություններին, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակները գրանցելուց հետո` հնգօրյա ժամկետում	Հոդված 32, մաս 2	Մարտի 20-ից մինչև մայիսի 1-ը	Գրանցում իրականացրած ընտրական հանձնաժողով (կենտրոնական ընտրական հանձնաժողով, տարածքային ընտրական հանձնաժողով)
20	Տեղամասային կենտրոնները սահմանվում են. քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 43 օր առաջ	Հոդված 16, մաս 1	Մինչև մարտի 21-ը	Համայնքի ղեկավար
21	Տեղամասային կենտրոնի սահմանման մասին ոստիկանությունը, տարածքային ընտրական հանձնաժողովը և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողը տեղեկացվում են. կենտրոնը սահմանելուց անմիջապես հետո` անհապաղ	Հոդված 16, մաս 1	Մարտի 21-ից ոչ ուշ	Համայնքի ղեկավար
22	Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ներկայացուցչությունում, ինչպես նաև կալանավորված անձանց պահելու վայրերում տեղամասային կենտրոնները կազմավորվում են. քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 43 օր առաջ	Հոդված 15, մաս 4	Մինչև մարտի 21-ը	Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ներկայացուցչություն, քրեակատարողական հիմնարկի ղեկավար
23	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրողների ռեգիստրը` ըստ շրջանների, համայնքների և ընտրական տեղամասերի, կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում որոնման հնարավորությամբ տեղադրելու համար, էլեկտրոնային տարբերակով կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է. քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 41 օր առաջ	Հոդված 7, մաս 4	Մինչև մարտի 23-ը	Ոստիկանություն
24	Ընտրական տեղամասերի հերթական համարները սահմանվում և այդ տվյալները կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. երկօրյա ժամկետում	Հոդված 49, մաս 1, կետ 2	Մինչև մարտի 23-ը	Տարածքային ընտրական հանձնաժողով

25	<p>Ընտրողների ցուցակների մեկ օրինակը (վերջին էջում ներառվող ընտրողների ցուցակներում անճշտությունների վերաբերյալ դիմումներ տալու ժամկետների, տեղի, դրանց քննարկման կարգի, ժամանակի և պայմանների մասին տեղեկանքով) տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին տրամադրվում և տեղամասային կենտրոնում փակցվում է.</p> <p>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 40 օր առաջ</p>	<p>Հոդված 10, մաս 1, Հոդված 11, մաս 3, Հոդված 6, մաս 8</p>	<p>Մինչև մարտի 24-ը</p>	<p>Ոստիկանություն, Տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող</p>
26	<p>Ընտրողների ցուցակները՝ էլեկտրոնային կրիչով կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրվում են.</p> <p>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 40 օր առաջ և 2օր առաջ</p>	<p>Հոդված 10, մաս 4</p>	<p>Մինչև մարտի 24-ը և մայիսի 1-ին</p>	<p>Ոստիկանություն</p>
27	<p>Ընտրողների ցուցակները՝ ըստ ընտրական տեղամասերի, համացանցում՝ ներբեռնելու հնարավորությամբ տեղադրվում են.</p> <p>քվեարկության օրվանից 40 օր և 2 օր առաջ</p>	<p>Հոդված 11, մաս 2</p>	<p>Մարտի 24-ին և մայիսի 1-ին</p>	<p>Ոստիկանություն</p>
28	<p>Կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին հանրային ռադիոյից և հանրային հեռուստատեսությունից անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու կարգը և ժամանակացույցը սահմանվում է.</p> <p>ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ հաջորդ օրը</p>	<p>Հոդված 19, մաս 2</p>	<p>Մարտի 30-ին</p>	<p>Կենտրոնական ընտրական հանձնաժողով</p>
29	<p>Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակները հրապարակվում են.</p> <p>գրանցման համար սահմանված ժամկետն ավարտվելուց հետո՝ եռօրյա ժամկետում</p>	<p>Հոդված 107, մաս 2</p>	<p>Մարտի 30-ից մինչև ապրիլի 1-ը</p>	<p>Կենտրոնական ընտրական հանձնաժողով</p>
30	<p>Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է .</p> <p>թեկնածուների, կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ</p>	<p>Հոդված 18, մաս 1</p>	<p>Մարտի 30-ից մինչև մայիսի 1-ի ժամը 24.00-ն</p>	<p>Նախընտրական քարոզչություն իրականացնողներ</p>

31	<p>Օրենսդրությամբ սահմանված դրույթների խախտմամբ փակցված քարոզչական պաստառները վերացվում են. <i>անհայտ</i></p>	<p>Հոդված 20, մաս 8</p>	<p>Մարտի 30-ից մինչև մայիսի 1-ի ժամը 24.00-ն ընկած ժամանակահատվածում փակցվածները՝ հայտնաբերման պահից</p>	<p>Համայնքի ղեկավար, անհրաժեշտության դեպքում՝ ոստիկանության աջակցությամբ</p>
32	<p>Վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է . <i>նախընտրական քարոզչության ժամանակահատվածում</i></p>	<p>Հոդված 19, մաս 9</p>	<p>Մարտի 30-ից մինչև մայիսի 1-ի ժամը 24.00-ն</p>	<p>Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով</p>
33	<p>Թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական ծրագրերը, ներկայացվելու դեպքում, կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում են. <i>ներկայացվելուց հետո՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը</i></p>	<p>Հոդված 6, մաս 4</p>	<p>Մարտի 30-ից մինչև մայիսի 1-ի ժամը 24.00-ն ներկայացվելու դեպքում՝ մինչև ներկայացնելուն հաջորդող օրվա ավարտը</p>	<p>Կենտրոնական ընտրական հանձնաժողով</p>
34	<p>Գույքի և եկամուտների (ֆինանսական միջոցների) մասին հայտարարագիրը համապատասխան հանձնաժողով ներկայացվում է. <i>ընտրական ցուցակի գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ հինգ օրվա ընթացքում</i></p>	<p>Հոդված 6, մաս 5</p>	<p>Մարտի 30-ից մինչև ապրիլի 3-ը</p>	<p>Թեկնածուներ, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) լիազոր ներկայացուցիչներ</p>
35	<p>Կուսակցությունների գույքի և ֆինանսական միջոցների հայտարարագրերը կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում են. <i>դրանք ներկայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում</i></p>	<p>Հոդված 6, մաս 6</p>	<p>Սկսած մարտի 30-ից</p>	<p>Կենտրոնական ընտրական հանձնաժողով</p>

36	<p>Թեկնածուների գույքի և եկամուտների հայտարարագրերի պատճենները ընտրական հանձնաժողովների անդամներին, վստահված անձանց, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին, դիտորդներին տրամադրվում են.</p> <p>գրավոր դիմումի հիման վրա՝ եռօրյա ժամկետում</p>	Հոդված 6, մաս 6	Սկսած մարտի 30-ից	Տարածքային ընտրական հանձնաժողով
37	<p>Նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն տեղեկանք ներկայացվում է.</p> <p>թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 3 աշխատանքային օրը մեկ</p>	Հոդված 25, մաս 6	Մարտի 30-ից սկսած՝ 3 աշխատանքային օրը մեկ	Բանկեր, որտեղ բացված են հատուկ հաշվեհամարներ
38	<p>Նախորդ կետում նշված տվյալներն ամփոփվում, դրանց վերաբերյալ ամփոփ տեղեկանք կազմվում և կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում է .</p> <p>ողջամիտ ժամկետներում</p>	Հոդված 25, մաս 6	Տեղեկանքը ներկայացնելուց հետո	Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն, Կենտրոնական ընտրական հանձնաժողով
39	<p>Տեղամասային ընտրական հանձնաժողովներ կազմավորելու համար հայտերը հանձնաժողովի նախագահին են ներկայացվում.</p> <p>քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 30 և ոչ ուշ, քան 25 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն</p>	Հոդված 42, մաս 2	Ապրիլի 3-ից մինչև ապրիլի 8-ի ժամը 18.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողովի անդամներ
40	<p>Տեղամասային ընտրական հանձնաժողովի առաջին նիստը կայանում է.</p> <p>հանձնաժողովի կազմավորումից հետո՝ երկօրյա ժամկետում</p>	Հոդված 42, մաս 5	Ապրիլի 5-ից մինչև ապրիլի 10-ը	Տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ, Տեղամասային ընտրական հանձնաժողովի տարիքով ավագ անդամ
41	<p>Նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը՝ ծախսերի կատարումը հաստատող փաստաթղթերով, իրենց գրանցած ընտրական հանձնաժողովներին ներկայացվում են .</p> <p>նախընտրական քարոզչությունն սկսելուց հետո՝ տասներորդ օրը, ինչպես նաև ընտրությունների արդյունքների ամփոփման համար՝ սահմանված ժամկետից ոչ ուշ, քան երեք օր առաջ</p>	Հոդված 27, մաս 1	Ապրիլի 9-ին և մայիսի 7-ին	Թեկնածուներ, կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ

42	<p>Ընտրական հանձնաժողովները նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ուղարկում են.</p> <p>դրանք ստանալուց հետո՝ երեք օրվա ընթացքում՝</p>	Հոդված 27, մաս 1	Մինչև ապրիլի 12-ը և մինչև մայիսի 10-ը	Գրանցում իրականացրած հանձնաժողովներ (կենտրոնական ընտրական հանձնաժողով, տարածքային ընտրական հանձնաժողով)
43	<p>Թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերն ստուգվում, ստուգման արդյունքներով տեղեկանքը կազմվում և այն կենտրոնական ընտրական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվում.</p> <p>հայտարարագրերը ստանալուց հետո՝ երկու օրվա ընթացքում՝</p>	Հոդված 28, մաս 3	Մինչև ապրիլի 14-ը և մինչև մայիսի 12-ը	Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն
44	<p>Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում են.</p> <p>ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում՝</p>	Հոդված 27, մաս 4	Մինչև ապրիլի 12-ը և մինչև մայիսի 10-ը	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
45	<p>Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության տեղեկանքը կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում է.</p> <p>կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստում քննարկելուց հետո՝</p>	Հոդված 28, մաս 3	Նիստից անմիջապես հետո	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
46	<p>Իրենց թեկնածությունը հանելու մասին դիմում ներկայացնելու իրավունք ունեն.</p> <p>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան տասն օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն</p>	Հոդված 119, մաս 3,4	Մինչև ապրիլի 23-ի ժամը 18.00-ն	Թեկնածուներ, կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ
47	<p>Ընտրողների թվի վերաբերյալ (ըստ ընտրատարածքների և ընտրական տեղամասերի) կենտրոնական ընտրական հանձնաժողովին տեղեկանք տրամադրվում է.</p> <p>քվեարկության օրվանից տասն օր և երեք օր առաջ</p>	Հոդված 10, մաս 2	Ապրիլի 23-ին և ապրիլի 30-ին	Ոստիկանություն
48	<p>Զինվորական մասերում հաշվառված ընտրողների ցուցակները գործամասերում՝ զինծառայողների համար տեսանելի տեղում փակցվում են.</p> <p>քվեարկության օրվանից տասն օր առաջ</p>	Հոդված 11, մաս 5	Ապրիլի 23-ին	Զինվորական մասի հրամանատար

49	<p>Քվեարկության օրվանից տասն օր առաջ ընտրողների թվի վերաբերյալ ոստիկանության կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա քվեաթերթիկները տպագրվում են.</p> <p>քվեարկության օրվանից ոչ շուտ, քան տասը, և ոչ ուշ, քան երեք օր առաջ</p>	Հոդված 56, մաս 6	Ապրիլի 23-ից մինչև ապրիլի 30-ը	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
50	<p>Ընտրությունների ժամանակ պարտադիր ժամկետային զինձառայության մեջ գտնվող կամ վարժական հավաքներ անցնող զինձառայողները ձառայությունից օրենսդրությամբ սահմանված կարգով ժամանակավոր արձակված լինելու դեպքում հանվում են զորամասի ընտրողների ցուցակից և իրենց մշտական բնակության վայրերում կարող են ընդգրկվել ընտրողների ցուցակում.</p> <p>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան յոթ օր առաջ ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին հայտ ներկայացնելու դեպքում</p>	Հոդված 8, մաս 8	Մինչև ապրիլի 26-ը	Ընտրողներ, Ոստիկանություն
51	<p>Համամասնական ընտրակարգով քվեարկությանը մասնակցելու համար քվեարկության օրն ըստ գտնվելու վայրի լրացուցիչ ցուցակում ընդգրկվելու մասին դիմում ոստիկանության կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավարին ներկայացվում են.</p> <p>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան յոթ օր առաջ</p>	Հոդված 8, մաս 3	Մինչև ապրիլի 26-ը	Այլ համայնքի հաշվառում ունեցող ընտրողներ
52	<p>Համամասնական ընտրակարգով գրանցված կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակները, քվեաթերթիկները, ընտրական այլ փաստաթղթերի նմուշները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններ կամ հյուպատոսական հիմնարկներ են ուղարկվում.</p> <p>քվեարկությունից յոթ օր առաջ</p>	Հոդված 59, մաս 1	Մինչև ապրիլի 26-ը	Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ Արտաքին գործերի նախարարության միջոցով
53	<p>Ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ընտրողի տվյալները հանելու և նրան ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների լրացուցիչ ցուցակում ընդգրկելու վերաբերյալ տեղեկանք տրամադրվում է.</p> <p>դիմումն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում</p>	Հոդված 8, մաս 3	Մինչև ապրիլի 26-ը դիմելու դեպքում	Ոստիկանություն
54	<p>Համամասնական ընտրակարգով ընտրության ժամանակ քվեարկությանը մասնակցելու համար ընտրողների լրացուցիչ ցուցակներում ընդգրկվելու դիմում կարող է ոստիկանություն ներկայացվել.</p> <p>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան յոթ օր առաջ</p>	Հոդված 8, մաս 5	Մինչև ապրիլի 26-ը	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հաշվառում չունեցող ընտրողներ

55	<p>Ընտրողն ընդգրկվում է քվեարկության օրը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գտնվելու վայրի մոտակա ընտրական տեղամասի ընտրողների լրացուցիչ ցուցակում և այդ մասին նրան տրամադրվում է տեղեկանք.</p> <p>Պիմումն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում</p>	Հոդված 8, մաս 5	Մինչև ապրիլի 26-ը դիմելու դեպքում	Ոստիկանություն
56	<p>Թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների վարկանիշների վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքների հրապարակումն արգելվում է.</p> <p>քվեարկության օրվան նախորդող յոթ օրվա ընթացքում, ներառյալ քվեարկության օրը՝ մինչև ժամը 20.00-ն</p>	Հոդված 21, մաս 3	Ապրիլի 27-ից մինչև մայիսի 3-ի ժամը 20.00-ն	Սոցիալական հարցումների կազմակերպություններ, պատվիրատուներ
57	<p>Ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները (այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող) վերացնելու մասին Պիմումն ուստիկանությունն ներկայացվում է.</p> <p>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան հինգ օր առաջ</p>	Հոդված 12, մաս 1	Մինչև ապրիլի 28-ը	Յուրաքանչյուր ոք
58	<p>Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները տարածքային ընտրական հանձնաժողովներին հանձնվում են.</p> <p>քվեարկության օրվանից ոչ շուտ, քան հինգ և ոչ ուշ, քան երեք օր առաջ</p>	Հոդված 57, մաս 3	Ապրիլի 28-ից մինչև ապրիլի 30-ը	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
59	<p>Ընտրական օրենսգրքով սահմանված բավարար հիմքերի առկայության դեպքում ընտրողների ցուցակում անհրաժեշտ փոփոխություններ կամ ուղղումներ կատարվում են և այդ մասին Պիմումն գրավոր տեղեկացվում է.</p> <p>Պիմումն ստանալուց հետո՝ հինգ օրվա ընթացքում, սակայն քվեարկության օրվանից ոչ ուշ, քան չորս օր առաջ</p>	Հոդված 12, մաս 1	Մինչև ապրիլի 29-ը	Ոստիկանություն
60	<p>Քվեարկության օրն ընտրական տեղամասեր գործուղվող ոստիկանության ծառայողների ցուցակը կազմվում է.</p> <p>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան չորս օր առաջ՝ մինչև ժամը 14.00-ն</p>	Հոդված 8, մաս 6	Մինչև ապրիլի 29-ի ժամը 14.00-ն	Ոստիկանություն
61	<p>Ըստ քվեարկության օրն ընտրական տեղամասեր գործուղվող ոստիկանության ծառայողների ցուցակների, ոստիկանության ծառայողներն հանվում են իրենց հաշվառման վայրի ընտրողների ցուցակից, կազմվում է ընտրական տեղամասում քվեարկող ոստիկանության ծառայողների լրացուցիչ ցուցակ.</p> <p>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան չորս օր առաջ՝ մինչև ժամը 14.00-ն</p>	Հոդված 8, մաս 6	Մինչև ապրիլի 29-ը	Ոստիկանություն

62	<p>Ստացիոնար բուժման մեջ գտնվող և տեղամասային կենտրոն ինքնուրույն ներկայանալու հնարավորություն չունեցող քվեարկությանը մասնակցել ցանկացող ընտրողների ցուցակը ուստիկանություն ներկայացվում է.</p> <p>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան չորս օր առաջ՝ մինչև ժամը 14.00-ն</p>	Հոդված 8, մաս 7	Մինչև ապրիլի 29-ը	Ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատության ղեկավար
63	<p>Ըստ ստացիոնար բուժման մեջ գտնվող և տեղամասային կենտրոն ինքնուրույն ներկայանալու հնարավորություն չունեցող քվեարկությանը մասնակցել ցանկացող ընտրողների ցուցակների, ստացիոնար բուժման մեջ գտնվող ընտրողներն հանվում են իրենց հաշվառման վայրի ընտրողների ցուցակից, կազմվում է ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատությունում քվեարկությանը մասնակցող ընտրողների լրացուցիչ ցուցակ.</p> <p>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան չորս օր առաջ՝ մինչև ժամը 14.00-ն</p>	Հոդված 8, մաս 7	Մինչև ապրիլի 29-ը	Ոստիկանություն
64	<p>Իրեն ընտրողների ցուցակում ընդգրկելու մասին դիմում ուստիկանություն ներկայացվում է.</p> <p>քվեարկության օրվան նախորդող չորս օրվա ընթացքում՝ մինչև քվեարկության ավարտը</p>	Հոդված 12, մաս 2	Ապրիլի 29-ից մինչև մայիսի 3-ի ժամը 20.00-ն	Յուրաքանչյուր ոք
65	<p>Քվեարկության օրվա, ընտրական տեղամասի համարի, քվեարկության տեղի և ժամանակի մասին ընտրողներին ծանուցագրեր են ուղարկվում .</p> <p>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան երեք օր առաջ</p>	Հոդված 11, մաս 6	Մինչև ապրիլի 30-ը	Ոստիկանություն
66	<p>Կալանավորված անձանց պահելու վայրերում գտնվող ընտրողների ցուցակները կազմվում են.</p> <p>քվեարկության օրվանից երեք օր առաջ</p>	Հոդված 8, մաս 12	Ապրիլի 30-ին	Քրեակատարողական հիմնարկի ղեկավար՝ տարածքային ընտրական հանձնաժողովի անդամի մասնակցությամբ
67	<p>Զինվորական մասերում հաշվառված ընտրողների ցուցակները տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին գմոսած ծրարով տրամադրվում են.</p> <p>քվեարկության օրվանից երեք օր առաջ, որը բացվում է միայն քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովում</p>	Հոդված 10, մաս 5	Ապրիլի 30-ին	Զորամասի հրամանատար, Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ

68	Ընտրողների ցուցակը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին հանձնվում է. քվեարկության օրվանից երկու օր առաջ	Հոդված 10, մաս 6	Մայիսի 1-ին	Քրեակատարողական հիմնարկի ղեկավար
69	Ոստիկանության կողմից կազմվող ընտրողների ցուցակներն (այդ թվում՝ լրացուցիչ ցուցակները)՝ ըստ ընտրական տեղամասերի և ընտրական տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները՝ տպագրված երկու օրինակից (ընտրողների ցուցակների, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակների 1-ին օրինակը՝ կազմված մատյանի ձևով, 2-րդ օրինակը՝ տեղամասային կենտրոնում փակցնելու համար), ինչպես նաև ընտրողների լրացուցիչ ցուցակներ կազմելու համար անհրաժեշտ ձևաթղթերը տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին տրամադրվում են. քվեարկության օրվանից երկու օր առաջ	Հոդված 10, մաս 3	Մայիսի 1-ին	Ոստիկանություն
70	Ընտրողների ցուցակի, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակների օրինակը տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է. քվեարկության օրվանից երկու օր առաջ	Հոդված 11, մաս 4	Մայիսի 1-ին	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ
71	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրողների ռեգիստրում ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվը հրապարակվում է. քվեարկության նախորդ օրը	Հոդված 6, մաս 7	Մայիսի 2-ին	Ոստիկանություն
72	Տեղամասային ընտրական հանձնաժողովներին քվեաթերթիկները և կնիքների փաթեթները հանձնվում են. քվեարկության նախորդ օրը	Հոդված 56, մաս 7, Հոդված 57, մաս 4	Մայիսի 2-ին	Տարածքային ընտրական հանձնաժողով
73	Քվեարկության սենյակի կահավորումը պետք է ավարտվի. քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24.00-ն	Հոդված 54, մաս 3	Մայիսի 2-ին՝ մինչև ժամը 24.00-ն	Համայնքի ղեկավար , Տարածքային ընտրական հանձնաժողով
74	Տեղամասային ընտրական հանձնաժողովին հանձնված բոլոր քվեաթերթիկները ստորագրվում են. քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24.00-ն	Հոդված 58, մաս 7	Մայիսի 2-ին՝ մինչև ժամը 24.00-ն	Վիճակահանությամբ որոշված տեղամասային ընտրական հանձնաժողովի 3 անդամներ
75	Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստը սկսվում է. քվեարկության օրը՝ ժամը 7.00-ին	Հոդված 61, մաս 1	Մայիսի 3-ին՝ ժամը 7.00-ին	Տեղամասային ընտրական հանձնաժողով

76	Քվեարկության սկիզբը հայտարարվում և ընտրողների մուտքը քվեարկության սենյակ թույլատրվում է. քվեարկության օրը՝ ժամը 8.00-ին	Հոդված 62, մաս 1	Մայիսի 3-ին՝ ժամը 8.00-ին	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ
77	Քվեարկության ավարտի մասին հայտարարվում և ընտրողների մուտքը քվեարկության սենյակ արգելվում է. քվեարկության օրը՝ ժամը 20.00-ին	Հոդված 66, մաս 1	Մայիսի 3-ին՝ ժամը 20.00-ին	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ
78	Քվեարկության օրը մինչև ժամը 11.00-ն, 14.00-ն, 17.00-ն և 20.00-ն տվյալ ընտրական տեղամասում քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը տարածքային ընտրական հանձնաժողով հաղորդվում են. քվեարկության օրը, համապատասխանաբար մինչև ժամը 11.30-ը, 14.30-ը, 17.30-ը և 20.30-ը	Հոդված 6, մաս 9	Մայիսի 3-ին	Տեղամասային ընտրական հանձնաժողովներ
79	Քվեարկության օրը մինչև ժամը 11.00-ն, 14.00-ն, 17.00-ն և 20.00-ն տվյալ ընտրական տեղամասում քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի մասին նախորդ կետում նշված տվյալները ամփոփվում, հրապարակվում և հաղորդում են կենտրոնական ընտրական հանձնաժողով. նախորդ կետում նշված պարբերականությամբ	Հոդված 6, մաս 9	Մայիսի 3-ին	Տարածքային ընտրական հանձնաժողովներ
80	Ընտրությունների ընթացքի մասին տեղեկությունները հրապարակվում են. քվեարկության օրը՝ ժամը 9.00-ին	Հոդված 6, մաս 9	Մայիսի 3-ին	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
81	Մինչև նախորդ ժամը քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի վերաբերյալ տեղեկությունները, ըստ ընտրատարածքների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության ուղիղ եթերով կենտրոնական ընտրական հանձնաժողովի նստավայրից կամ կենտրոնական ընտրական հանձնաժողովի մամլո կենտրոնից հրապարակվում են. քվեարկության օրը՝ ժամը 12.00-ից մինչև 21.00-ն, երեքժամյա պարբերականությամբ	Հոդված 6, մաս 9	Մայիսի 3-ին	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
82	Մինչև նախորդ ժամը քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի մասին տեղեկություններն ըստ ընտրական տեղամասերի տեղադրվում են կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում. այդ տեղեկությունների հրապարակումից հետո(տես նախորդ կետը)	Հոդված 6, մաս 9	Մայիսի 3-ին	Կենտրոնական ընտրական հանձնաժողով

83	Կախված ընտրելու իրավունք ունեցող անձանց թվից՝ կախանավորված անձանց պահելու վայրերում քվեարկությունը կազմակերպվում է. Ժամը 9.00-ից հետո	Հոդված 60, մաս 2	Մայիսի 3-ին	Քրեակատարողական հիմնարկի ղեկավար
84	Կախանավորված անձանց պահելու յուրաքանչյուր վայրի համար քվեարկության սկիզբը սահմանվում է այն հաշվարկով, որ՝ քվեարկությունն ավարտված լինի ժամը 20.00-ին	Հոդված 60, մաս 2	Մայիսի 3-ին	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
85	Ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատություններում քվեարկությունը կազմակերպվում է. մինչև քվեարկության օրվա ժամը 18.00-ն	Հոդված 53, մաս 2	Մինչև մայիսի 3-ի ժամը 18.00-ն	Տեղամասային ընտրական հանձնաժողով
86	Ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին ուստիկանության տեղեկանքի հիման վրա ընտրողների ցուցակում լրացում կատարվում է. քվեարկության օրը՝ լրացուցիչ ցուցակ կազմելու միջոցով	Հոդված 12, մաս 2	Մայիսի 3-ին՝ մինչև ժամը 20.00-ն	Տեղամասային ընտրական հանձնաժողով
87	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում ընտրողների ցուցակները կազմվում են. ընտրությունը նշանակելուց հետո՝ մինչև քվեարկության ավարտը	Հոդված 8, մաս 4	Փետրվարի 13-ից մինչև մայիսի 3-ի ժամը 20.00-ն	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություն
88	Արգելվում է հրապարակել ընտրողների հարցման արդյունքներն այն մասին, թե ում օգտին են քվեարկել. քվեարկության օրը՝ մինչև ժամը 20.00-ն	Հոդված 21, մաս 3	Մայիսի 3-ին՝ մինչև ժամը 20.00-ն	Վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող ռադիոընկերություններ, հեռուստաընկերություններ
89	Նախընտրական հիմնադրամների հաշիվների հետ կատարվող բոլոր գործառնությունները դադարեցվում են. քվեարկության օրվանից	Հոդված 26, մաս 5	Մայիսի 3-ից	Թեկնածուներ, կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ, բանկեր
90	Քվեարկության արդյունքների աղյուսակավորումն (ըստ ընտրական տեղամասերի) իրականացվում է. ոչ ուշ, քան քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 00-ից սկսած	Հոդված 6, մաս 10	Մայիսի 4-ի ժամը 00-ից սկսած	Կենտրոնական ընտրական հանձնաժողով

91	<p>Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության կազմումն ավարտվում և արձանագրությունը հրապարակվում է.</p> <p>նիստի վերջում, բայց ոչ ուշ, քան քվեարկության ավարտից տասը ժամ հետո</p>	Հոդված 69, մաս 5	Մինչև մայիսի 4-ի ժամը 6.00-ն	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ
92	<p>Ընտրական փաստաթղթերի ընդհանուր փաթեթը, քվեարկության արդյունքների արձանագրության երկու օրինակը, գրանցամատյանը և հանձնաժողովի կնիքը տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում են.</p> <p>քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում</p>	Հոդված 69, մաս 9	Մինչև մայիսի 4-ի ժամը 8.00-ն	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ և քարտուղար
93	<p>Արտերկրյա տեղամասերում քվեարկության արդյունքներն ամփոփվելուց, դրա վերաբերյալ արձանագրություն կազմվելուց հետո՝ ընտրական փաստաթղթերի հետ միասին, կնքված վիճակում, հատուկ փոստով ուղարկվում են կենտրոնական ընտրական հանձնաժողով.</p> <p>անհապաղ</p>	Հոդված 59, մաս 1	Մինչև մայիսի 4-ի ժամը 20.00-ն	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի ղեկավար
94	<p>Տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության տվյալները՝ ըստ ընտրական տեղամասերի աղյուսակավորվում են.</p> <p>պարբերաբար, բայց ոչ ուշ, քան երեք ժամը մեկ</p>	Հոդված 71, մաս 2	Մինչև մայիսի 4-ի ժամը 14.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողով
95	<p>Ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունների տվյալների աղյուսակավորումն ավարտվում է.</p> <p>քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում</p>	Հոդված 71, մաս 2	Մինչև մայիսի 4-ի ժամը 14.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողով
96	<p>Տարածքում քվեարկության արդյունքների աղյուսակավորման օրինակը՝ վավերացված հանձնաժողովի նախագահի (տեղակալի) և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով, փակցվում է հանձնաժողովում՝ բոլորի համար տեսանելի տեղում.</p> <p>անհապաղ</p>	Հոդված 71, մաս 3	Մինչև մայիսի 4-ի ժամը 14.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ
97	<p>Մեծամասնական ընտրակարգով պատգամավորի ընտրությունների քվեարկության նախնական արդյունքներն ամփոփվում և արձանագրությամբ վավերացվում են.</p> <p>քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում</p>	Հոդված 72, մաս 1	Մինչև մայիսի 4-ի ժամը 14.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողով

98	<p>Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմում կարող է ներկայացվել միայն տարածքային ընտրական հանձնաժողով.</p> <p>քվեարկության հաջորդ օրը՝ մինչև ժամը 18.00-ն</p>	<p>Հոդված 47, մաս 1</p>	<p>Մինչև մայիսի 4-ի ժամը 18.00-ն</p>	<p>Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը ներկա գտնված թեկնածու, վստահված անձ, հատուկ կարծիք հայտնած տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ</p>
99	<p>Քվեարկության նախնական արդյունքների աղյուսակավորումն ավարտվում և ընտրությունների նախնական արդյունքները հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում են.</p> <p>ընտրական տեղամասից քվեարկության արդյունքների մասին վերջին տեղեկություններն ստանալուց հետո՝ ոչ ուշ, քան քվեարկության ավարտից հետո՝ 24 ժամվա ընթացքում</p>	<p>Հոդված 6, մաս 10</p>	<p>Մինչև մայիսի 4-ի ժամը 20.00-ն</p>	<p>Կենտրոնական ընտրական հանձնաժողով</p>
100	<p>Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են.</p> <p>քվեարկության ավարտից հետո, ընտրական փաստաթղթերի ընդհանուր փաթեթի հետ միաժամանակ</p>	<p>Հոդված 57, մաս 5</p>	<p>Մինչև մայիսի 4-ի ժամը 20.00-ն</p>	<p>Տարածքային ընտրական հանձնաժողով</p>
101	<p>Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության մեկ օրինակը կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է.</p> <p>քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում</p>	<p>Հոդված 71, մաս 3</p>	<p>Մինչև մայիսի 4-ի ժամը 20.00-ն</p>	<p>Տարածքային ընտրական հանձնաժողով</p>
102	<p>Համամասնական ընտրակարգով ընտրությունների քվեարկության նախնական արդյունքներն ամփոփվում, արձանագրությամբ վավերացվում ու հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության ուղիղ եթերով պաշտոնապես հրապարակվում են.</p> <p>քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 24 ժամ հետո</p>	<p>Հոդված 73, մաս 1</p>	<p>Մինչև մայիսի 4-ի ժամը 20.00-ն</p>	<p>Կենտրոնական ընտրական հանձնաժողով</p>
103	<p>Միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա հասարակական կազմակերպությունների դիտորդական առաքելությունների՝ ընտրությունների վերաբերյալ զեկույցները կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում են.</p> <p>ներկայացնելուց հետո՝ ողջամիտ ժամկետներում</p>	<p>Հոդված 29, մաս 3</p>	<p>Մայիսի 4-ից սկսած</p>	<p>Կենտրոնական ընտրական հանձնաժողով</p>

104	<p>Տարածքում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի ընտրությունների քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կազմվում է.</p> <p>քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում, իսկ բողոք լինելու դեպքում քվեարկության օրվանից հետո՝ հինգերորդ օրը</p>	Հոդված 72, մաս 2	Մինչև մայիսի 5-ի ժամը 20.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողով
105	<p>Վերահաշվարկն իրականացվում է.</p> <p>վերահաշվարկի դիմումների ընդունման ժամկետի հաջորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև քվեարկության օրվանից հետո՝ հինգերորդ օրը՝ ժամը 14.00-ն</p>	Հոդված 47, մաս 6	Մայիսի 5-ի ժամը 9.00-ից սկսած մինչև մայիսի 8-ի ժամը 14.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողով
106	<p>Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրությունների քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կազմվում է, ընտրության արդյունքներն ամփոփվում և ընտրությունների վերաբերյալ որոշում ընդունվում է.</p> <p>քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 72 ժամվա ընթացքում, իսկ տարածքային ընտրական հանձնաժողովում բողոք լինելու դեպքում՝ քվեարկության օրվանից հետո՝ յոթերորդ օրը</p>	Հոդված 73, մաս 2, Հոդված 123, մաս 1	Մինչև մայիսի 6-ը, Մայիսի 10-ին	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
107	<p>Ընտրողների ցուցակի, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակների օրինակը տեղամասային կենտրոնում մնում են փակցված.</p> <p>մինչև տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորությունների դադարման օրը</p>	Հոդված 11, մաս 4	Մինչև մայիսի 8-ը	Տեղամասային ընտրական հանձնաժողով
108	<p>Տարածքում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի ընտրությունների քվեարկության արդյունքներն ամփոփվում և դրա վերաբերյալ որոշում ընդունվում է.</p> <p>քվեարկության օրվանից հետո՝ հինգ օրվա ընթացքում</p>	Հոդված 72, մաս 8, Հոդված 124, մաս 1	Մինչև մայիսի 8-ը	Տարածքային ընտրական հանձնաժողով
109	<p>Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի ընտրությունների արդյունքների վերաբերյալ արձանագրության և որոշման օրինակները կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են.</p> <p>երկօրյա ժամկետում</p>	Հոդված 72, մաս 9, Հոդված 124, մաս 9	Մինչև մայիսի 10-ը	Տարածքային ընտրական հանձնաժողով
110	<p>Ընտրության արդյունքներն ամփոփվում և դրա վերաբերյալ որոշում ընդունվում է.</p> <p>քվեարկության օրվանից հետո՝ յոթերորդ օրը</p>	Հոդված 73, մաս 6	Մայիսի 10-ին	Կենտրոնական ընտրական հանձնաժողով

111	Ընտրական գրավի գումարը վերադարձվում է. գրավոր դիմումի հիման վրա՝ մեկամսյա ժամկետում	Հոդված 24, մաս 2	Մայիսի 10-ից հետո դիմելու դեպքում	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
112	Տեղամասային ընտրական հանձնաժողովը տարածքային ընտրական հանձնաժողովին, իսկ տարածքային ընտրական հանձնաժողովը կենտրոնական ընտրական հանձնաժողովին ֆինանսական միջոցների ծախսման վերաբերյալ հաշվետվությունը ներկայացնում է. ընտրություններից հետո՝ համապատասխանաբար տասնօրյա ժամկետում և քսանօրյա ժամկետում	Հոդված 23, մաս 4	Մինչև մայիսի 13-ը և մայիսի 23-ը	Տեղամասային ընտրական հանձնաժողով, Տարածքային ընտրական հանձնաժողով
113	Կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վերահսկիչ պալատ ներկայացվում է. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում	Հոդված 23, մաս 4	Մինչև հունիսի 4-ը	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
114	Ընտրությունների կազմակերպման և անցկացման, ընտրական օրենսգրքի խախտումների վերլուծության վերաբերյալ հաղորդագրությամբ և առաջարկություններով Ազգային ժողովում հանդես է գալիս. ընտրությունների արդյունքների հրապարակումից հետո՝ երեք ամսվա ընթացքում	Հոդված 48, մաս 2	Մինչև օգոստոսի 10-ը	Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ կամ նրա համաձայնությամբ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որևէ անդամ
115	Ընտրությունից հետո նախընտրական հիմնադրամում մնացած միջոցները փոխանցվում են պետական բյուջե. ընտրության արդյունքների պաշտոնական հրապարակումից հետո՝ եռամսյա ժամկետը լրանալուց հետո	Հոդված 26, մաս 7	Օգոստոսի 10-ից հետո	Կենտրոնական ընտրական հանձնաժողով

Ծանոթություն-Ընտրական հանձնաժողովների աշխատաժամերն են՝ 9.00-ից մինչև 18.00, հանգստյան օրերը՝ շաբաթ և կիրակի, եթե Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքով և սույն ժամանակացույցով այլ բան նախատեսված չէ:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ